ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 17 – Ա **20 հունվարի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԽՈԼԵՐԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՐՏԱԿԱՐԳ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 656-Ա որոշմամբ հաստատված խոլերայի ներթափանցման, տարածման, կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների մոբիլիզացիոն ծրագրի 1-ին կետի պահանջը

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վարդանյան Լուսինե	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար, նախագահ
Դվոյան Սևակ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար
Կարապետյան Աշոտ	- «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Էլիզբարյան Գայանե	- «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Հարությունյան Անդրանիկ	- «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Հովհաննիսյան Արթուր - «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի տնօրեն

Շահինյան Շահեն - «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մելքումյան Արմեն - «Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Հովհաննիսյան Սվետլանա - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի Գավառի բաժնի պետ /համաձայնությամբ/

Սարգսյան Գոհարիկ - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» ՊՈԱԿ-ի «Գեղարքունիք» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

20.01.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ